Նժդեհ Հովսեփյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 1991-2001 ԹԹ.

***Բանալի բառեր-*** *բազմակուսակցական համակարգ, ԽՍՀՄ փլուզում, ժողովրդավարություն, Երրորդ Հանրապետություն, հետխորհրդային տրանսֆորմացիա, քաղաքական ներկապնակ:*

ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին Հայաստանում արդեն գոյություն ունեին ձևավորված և քաղաքական գաղափարաբանություն կրող մի շարք կուսակցություններ: Բազմակուսակցական համակարգի իրավական ամրագրմամբ ինչպես աշխարհի ժողովրդավարական այլ երկրներում, այնպես էլ Հայաստանում, քաղաքական կուսակցությունների ձևավորումը չշեղվեց դասական տրամաբանությունից՝ հանդես գալով իբրև քաղաքացիների մի խմբի կամավոր միավորում, որի հիմնարար նպատակը ընտրություններին մասնակցելն է և իշխանության իրացման իրական լծակներ ստանալը: Քաղաքական գաղափարաբանությունն է այն պարարտ հիմքը, որ թե՛ ձևակերպում է կուսակցության խնդիրն ու գործունեության միջոցները, թե՛ տալիս նպատակին հասնելուն հաջորդող իրավիճակի մոտավոր տեսլականը[1]:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նոր աշխարհակարգի ու սոցիալ-քաղաքական գործոնների զարգացմամբ պայմանավորված՝ աջերի ու ձախերի միջև բաժանումն աստիճանաբար վերանում է: Ըստ էության՝ աջ-ձախ քաղաքական բաժանումն այլևս վերաբերում է ոչ թե հաստատագրված երկու գաղափարաբանություններին, այլ պարզապես քաղաքական նպատակներ հետապնդող դաշինքներին, որ փոխանցվում են մեկ սերնդից մյուսին[2]: Այս առումով հայկական իրականությունում առանձնացնելի են երեք հիմնական հոսանքներ՝ սոցիալ դեմոկրատներ՝ համայնավարներ, ազգային սոցիալիստներ՝ դաշնակցականներ, ազատականներ, որոնց միջև հարաբերությունների պատկերը պաշտոնական քաղաքական դաշտում տնօրինվող քվեների խճանկարի հետ հաճախ առնչություն չունի[3]:

Մոտալուտ անկախության և ազատականության շնչով պայմանավորված՝ Հայաստանում արդեն 1989թ. վերջերից միակուսակցական համակարգի նկատմամբ համընդհանուր դժգոհությունը վերածվել էր ատելության: Արդյունքը եղավ այն, որ անկախության հաստատմամբ և նոր իրողություններով պայմանավորված՝ Հայաստանում քաղաքական կյանքի զարգացումը նոր թափ ստացավ: Այն դուրս չմնաց համաշխարհային պատմության սահմանած ուղեգծերից, երբ առաջացան քաղաքական ներկապնակը աջից ձախ ներկայացնող բոլոր դերակատարները, որոնք առնվազն մինչև անկախության առաջին տասնամյակը որոշակիորեն գաղափարաբանական բանավեճ էին վարում: 1991 թ. ի վեր ՀՀ ազդեցիկ քաղաքական կազմակերպությունները դասական ձևաչափում ունեին իրենց տեղերը: Աջ և աջ-կենտրոնում դիրքավորվել էին Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ) ու 1995 թ. նրա դաշնակիցները, օրինակ՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միությունը (ՀՔԴՄ), Ռամկավար ազատական լիբերալ կուսակցությունը (ՌԱԼԿ) և այլն: Ի դեպ, մի շարք հարցերում դրսևորվել է նաև ՀՀՇ-ի և Հայաստանի ռամկավար ազատական կուսակցության (ՀՌԱԿ) համագործակցությունը, ինչպես օրինակ՝ 1995 թ. ՀՀ Սահմանադրության ընդունում, 1996 թ. նախագահական ընտրություններ և այլն: ՀՀՇ-ի հետ դաշնակցում էր նաև ձախական Սոցիալ դեմոկրատ

[1] Տե՛ս McLellan D., Ideology, Minnesota, 1986, p. 1.
[2] Տե՛ս Cameron A., Introduction, in Norberto Bobbio, Left and Right, The significance of a Political Distinction, Chicago, 1996, p. IX.
[3] Տե՛ս Բագրատյան Հ., Հայաստանը դարերի սահմանագծին, Ե., 2003, էջ 111-112:

հնչակյան կուսակցությունը (ՍԴՀԿ): Իսկ նույն այս տիրույթին պատկանող Ազգային ինքնորոշում միավորումը (ԱԻՄ) գտնվում էր արմատական ընդդիմության դիրքերում: Աջ ծայրահեղականության ներկայացուցիչ Ազգային ժողովրդավարական միությունը (ԱԺՄ) ևս հանդես էր գալիս ընդդիմադիր ճակատում: Ձախ թևում դիրքավորվել էին Հայ յեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), Հայաստանի կոմունիստական կուսակցությունը (ՀԿԿ), Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը (ՀԴԿ), սոցիալիստական մի շարք կուսակցություններ, որոնք գրեթե բոլորն էլ ընդդիմադիր էին:

Կուսակցությունների այս բազմությունից անկախության շարժումը ղեկավարողի իր կարգավիճակով տարբերվում էր ՀՀՇ-ն: Սկզբնական շրջանում լինելով ազատականության դրոշակակիրը՝ ՀՀՇ-ն Հայաստանում 1990-1995 թթ. արմատական վերափոխումներ իրականացրեց: Աստիճանաբար, հատկապես 1995 թ. խորհրդարանական ընտրություններից առաջ ձևավորված «Հանրապետություն» միավորումը, որի հիմնական կորիզը նույն ՀՀՇ-ն էր, արդեն հանդես էր գալիս որպես աջ-պահպանողական ուժ[1]:

ՀՀՇ կուսակցությունը փաստացիորեն ստեղծվել է 1988 թ. օգոստոսին, իսկ նրա կանոնադրությունն ու ծրագիրը ընդունվել են 1989 թ. նոյեմբերի 5-ի հիմնադիր համագումարում, մինչդեռ պաշտոնապես կուսակցությունը գրանցվել է միայն 1991 թ. հուլիսի 15-ին: Ըստ էության, ՀՀՇ-ն այդ ժամանակ որդեգրում էր փաստացի անկախության հաստատման միջոցով դրա իրավական ամրագրման մարտավարությունը: Կարելի է ասել, որ ՀՀՇ-ի ծրագրով նախատեսվում էր ապահովել ՀՀ ինքնուրույն պետական գործառնությունը թե՛ ԽՍՀՄ-ի պահպանման, թե՛ անակնկալ փլուզման դեպքերում[2]: Դեռևս իր առաջին համագումարում ՀՀՇ-ի համար առաջնահերթություն էր հռչակվում անկախության հարցը, որի լուծմամբ պիտի մեկնարկեր քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային հարաբերությունների զարգացումը հետխորհրդային Հայաստանում[3]: ՀՀՇ-ն ՀՀ-ի՝ կենսունակ պետություն դառնալու հույսը շաղկապում էր «ավանդական մտածողության» հաղթահարման բանաձևին[4]: Որպես ՀՀՇ-ի դավանած արժեքներ և սկզբունքներ առանցքային էին ժողովրդի ազատ կամարտահայտության նկատմամբ հարգանքը, բացառապես սեփական ուժերին ապավինելը, բոլոր հարևանների հետ խաղաղ ու համերաշխ գոյակցությունը, ինքնորոշման և սոցիալական արդարության սկզբունքների գերապատվությունը, ազգայնամոլության ու ազգայնական խտրականության բացառումը[5]:

Հետաքրքիր է, որ 1988 թ. ՀՀՇ-ի կազմավորողները ճիշտ չէին համարում շարժման կուսակցականացումը՝ այն դիտելով իբրև «մեկընդմիշտ որոշված կաղապարի մեջ» սահմանափակելու գործողություն[6]: Ի վերջո, նման փոխակերպումից պիտի ծագեին «համակարգային բնույթ կրող անխուսափելի հակասություններ»[7]: Ինչ վերաբերում է կառուցվածքայնության խնդրին, ապա մինչ ՀՀՇ համազգային խորհրդի ստեղծումը, կազմակերպության ղեկավարության իրավունքը պատկանում էր Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեին[8]: Կուսակցության բարձրագույն մարմինը համագումարն էր, իսկ մշտական ղեկավարությունն իրականացնում էին ՀՀՇ խորհուրդն ու վարչությունը: Վերջինս ուներ իր նախագահը և քարտուղարը[9]:

---

[1] Տե՛ս Բագրատյան Հ., Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրանից դուրս գալու ելքերի մասին, Ե., 2000, էջ 4:
[2] Տե՛ս «Հայք», 6 նոյեմբերի 2009:
[3] Տե՛ս Քեռյան Գ., Հայաստանի Երրորդ Հանրապետության կուսակցական համակարգը և քաղաքական կուսակցությունները: Ե., 1996, էջ 25:
[4] Տե՛ս Լիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերները. Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, Ե., 1999, էջ 15:
[5] Տե՛ս Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակուղում (ելույթների և հոդվածների ժողովածու), Ե., 2002, էջ 17-23:
[6] Տե՛ս Սիրադեղյան Վ., Առաջին և վերջին քայլը ազատության ճանապարհին: Որն է մեր ճանապարհը, կազմ. Ա. Բլեյան, Ե., 1990, էջ 86-92:
[7] «Սահմանադրական պետության կառուցման հիմնախնդիրը Հայաստանում», Մ. Սարգսյան, Ա. Ավթանդիլյան, Է. Վարդանյան և ուրիշ., Ե., 2010, էջ 31:
[8] Մանուկյան Վ., նշվ. աշխ., էջ 23:
[9] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կուսակցություններ», «Տեղեկագիր», 2007, Ե., էջ 209:

Արտաքին քաղաքականության հարցերում ՀՀՇ-ն խիստ կարևորում էր հայ-ռուսական հարաբերությունների գործընկերության հավասարազոր բնույթը: Նույնպիսի մոտեցում էր որդեգրվում նաև ԱՄՆ-ի հետ համագործակցության ասպարեզում: Իսկ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հիմքում սահմանների բացումն ու դիվանագիտական հարաբերությունների հաստատումն էր՝ առանց նախապայմանների: ՀՀՇ առաջին համագումարի՝ ԼՂ-ին վերաբերող բանաձևում հիմք էր ընդունվում բոլոր ժողովուրդների ազատ ապրելու իրավունքը[1]: Անկախության շրջանում արդեն ՀՀՇ-ն Արցախյան հակամարտության լուծումը տեսնում էր բանակցությունների միջոցով՝ փոխզիջումների ճանապարհով: Կուսակցությունն ընդունելի էր համարում ցանկացած լուծում, որին կողմ կլիներ Արցախը: Հայոց ցեղասպանությունը գաղափարաբանական հարթությունից քաղաքական հարթություն տեղափոխելու կողմնակից լինելով՝ ՀՀՇ-ն վստահ էր, որ հարցը պիտի քննարկվեր բացառապես հայ-թուրքական ուղղակի երկխոսային տիրույթում: Դրա հետ մեկտեղ՝ ՀՀՇ-ն կտրականապես մերժում էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը ՀՀ արտաքին քաղաքականության հիմքում դնելը:

Արձանագրենք, որ քաղաքական հակառակորդների կողմից ՀՀՇ-ն ի սկզբանե մեղադրվել է Հայ դատը անտեսելու ու պահանջատիրությունը ուրանալու մեջ: Ի պատասխան՝ ՀՀՇ-ն պարզաբանում էր, որ Հայ դատը հայկական պետականության կայացումն էր, ՀՀ-ի բարգավաճումն ու Արցախի «հայապահպանությունը»: Այս երեք առաջադրանքն էր ՀՀ նախագահ և ՀՀՇ առաջնորդ Լ. Տեր-Պետրոսյանը համարում իր սերնդի առաքելությունը: Հրաժարվելով «պատրանքներին ու սնամեջ քաղաքական բաղձանքներին» տուրք տալու մոտեցումից՝ ՀՀՇ-ն հավաստիացնում էր, որ ելնում էր իրատեսության դիրքերից՝ հանդես գալով հաղթահարելի խնդիրներ առաջադրելու ու դրանք լուծելու պահանջմունքով[2]: ՀՀՇ-ի ղեկավարության համոզմունքով ՀՀՇ-ն ելնում էր «իրականի ու ծիսականի տարանջատման» հրատապությունից[3]:

Իշխանության գալով, սակայն, Հայոց համազգային շարժումը մեղմացրեց իր դիրքորոշումը Արցախի հակամարտության ոլորտում և հրաժարվեց սկզբնական արմատականությունից[4]: Այդօրինակ փոփոխությունը խոստովանում էր նաև ՀՀՇ-ն՝ մեկնաբանելով, որ ՀՀ-ի ու Արցախի վերամիավորումը հնարավոր էր ԽՍՀՄ գոյության պայմաններում, սակայն անկախության շրջանում անխուսափելի էր քաղաքական շեշտի վերաձևումը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքն ազգերի ինքնորոշմանը[5]: ՀՀՇ-ի ծրագրային հիմնադրույթները կազմակերպության գործունեությանը զուգահեռ տարեց տարի փոփոխությունների են ենթարկվել[6]: Սա լիովին բնական է, երբ դիտարկում ենք հանգամանքը, որ կուսակցությունը ձևավորվել էր խորհրդային իրականությունում, իսկ ապա պատմական, տարածաժամանակային առանձնահատկություններով պայմանավորված (անկախության հռչակման և անկախ պետության հաստատման գործընթացներ)՝ պիտի վերանայեր իր մոտեցումները և որոշակի ճշգրտումներ կատարեր:

1990-ական թթ. սկզբին ՀՀՇ-ի քաղաքական ազդեցության և Գերագույն խորհրդում ունեցած ներկայացվածության հետ կարող էր մրցել միայն Հայաստանի կոմունիստական կուսակցությունը: 1990 թ. մայիսի 20-ի ԳԽ ընտրություններում ՀԿԿ-ն չկարողացավ վերցնել գործադիր և օրենսդիր իշխանությունների ղեկը: Ըստ էության, Հայաստանում տեղի ունեցավ սահուն իշխանափոխություն: Գրեթե 70-ամյա մենատիրությունից հետո ՀԿԿ-ն զրկվեց իշխանության լծակներից, ինչը բնականորեն պիտի անդրադառնար նաև կուսակցության դիրքային նահանջի վրա:

---

[1] Տե՛ս «ՀՀՇ I համագումար», Բանաձև Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ, Ե. , 1989:
[2] Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի (Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ), Ե., 2006, էջ 384:
[3] Տե՛ս Libaridian G., Armenia at the Crossroads, September 1991, p. 167.
[4] Տե՛ս Հարությունյան Ս., Անցյալի և ներկայի մասին, Ե., 2011, էջ 161:
[5] Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 380:
[6] Տե՛ս Քեռյան Գ., նշվ. աշխ., էջ 24:

Հարկ է ընդգծել, որ խորհրդային կարգերի փլուզումն ամենևին էլ ձախ թևի վախճանը չէր, այլ խորհրդանշում էր սոսկ ձախական շարժման մի յուրօրինակ պատմական ժամանակափուլի ավարտը[1]: Ոչ էլ ձախական գաղափարաբանության սնանկացման ցուցիչն էր ՀԿԿ-ի ընդդիմադիր գործունեությունը 1990-ականներին: Հայաստանի կոմունիստական կուսակցությունը ՀՀ «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքի տառին համապատասխան վերակազմավորվեց 1991 թ.: Ձևական առումով ԽՄԿԿ-ից ինքնորոշվելով 1990 թ.՝ ՀԿԿ-ն այսուհետ իրեն հռչակում էր 1920 թ.Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների միավորման հետևանքով ձևավորված Հայաստանի կոմունիստական-բոլշևիկյան կուսակցության ՀԿ(բ)Կ-ի իրավահաջորդն ու նրա գործի շարունակողը[2]: Կուսակցության քաղաքական դերակատարության հարցի պարզաբանման համար պահանջվեց 3-4 տարի: Գործընթացն ամբողջացավ 1994 թ. կայացած կուսակցության 31-րդ համագումարում, որտեղ հստակեցվեցին գաղափարաբանական հիմնադրույթներն ու քաղաքական նպատակները[3]: ՀԿԿ-ն իր կանոնադրության մեջ այժմ արդեն ընդգծում էր ինքնուրույն կուսակցություն լինելու հանգամանքը:[4] Նկատի ունենալով ողջ Խորհրդային միության տարածքում ԽՄԿԿ քաղբյուրոյի ազդեցությունը՝ դժվար չէ նկատել, որ ՀԿԿ-ն նման ձևակերպմամբ ձգտում էր առավել ցուցադրական դարձնել իր անկախ կարգավիճակը:

Մոտ 70 տարի Հայաստանում գործունեություն ծավալած Կոմկուսը, 1991 թ. իշխանությունից զրկվելով, կարճ ժամանակում պառակտվեց՝ ի ցույց դնելով կուսակցության իրական թուլությունն ու սոցիալ-գաղափարական ամուր հենարան չունենալու փաստը: Բայց և այնպես, իր հիմնական կորիզով ՀԿԿ-ն կազմակերպչական աշխատանքների արդյունքում կազդուրվեց և 2-3 տարվա ընթացքում կրկին դարձավ ՀՀ առաջատար քաղաքական ուժերից մեկը: Շեշտելի է, այնուամենայնիվ, որ ՀԿԿ-ին այդպես էլ չհաջողվեց իրականացնել այն նույն թռիչքը, որով նախկին կոմունիստ ղեկավարները իշխանության վերադարձան ԽՍՀՄ նախկին հանրապետությունների հիմնական մասում: Ինչևէ, անկախության հաստատումից հետո Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավար բարձրագույն մարմնի կարգավիճակ ստացան համագումարները, որոնց միջակայքում կուսակցության համակարգումը պիտի իրացնեին Կենտկոմի պլենումն ու բյուրոն, որն էլ ուներ իր առաջին և երկրորդ քարտուղարները:

ՀԿԿ-ն իրեն հռչակում էր աշխատավորների սոցիալական պաշտպանության, սոցիալիզմի ու ժողովրդավարության կուսակցություն: Հաստատակամորեն պահպանելով գաղափարաբանական ակունքները՝ իր գաղափարաբանություն էր ճանաչում մարքսիզմ-լենինիզմը: Խորհրդային կարգերում տեղ գտած բացասական երևույթների համար որպես պատասխանատու մատնանշվում էր կուսակցական-պետական վերնախավը: Վերջինս, ըստ ՀԿԿ-ի, դաշնակցելով «արտասահմանյան հետադիմական շրջանների» հետ՝ փլուզեց ԽՍՀՄ-ը և արատավորեց սոցիալիզմի գաղափարը[5]: Իսկ ՀՀ արտաքին քաղաքականությունը ՀԿԿ-ն ընկալում էր Ռուսաստանի հետ խորը համագործակցության ծիրում: Տարածաշրջանային ծրագրերում ՀՀ-ի ընդգրկվելուն կողմ արտահայտվելով հանդերձ՝ Կոմկուսը միանշանակորեն բացառում էր Թուրքիայի հետ հնարավոր կապերը: ՀԿԿ-ն միաժամանակ սատար էր կանգնում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին՝ բարձրացնելով պահանջատիրության հիմնահարցը: Իսկ ահա Արցախի հակամարտությանն անդրադառնալիս ՀԿԿ-ն պահանջում էր ԼՂՀ ճանաչումը[6]: Ակնհայտ է, որ 1990-ականների սկզբին, ի համեմատություն ԽՄԿԿ-ի հայաստանյան ներկայացուցչության, այլևս ձևավորվել էր նոր Կոմկուս, որ վերանայել էր արտաքին քաղաքականությանն առնչվող իր հայացքները, հատկապես հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման և ԼՂ-ի

[1] Տե՛ս Bobbio N., Left and Right, the Significance of a Political Distinction, 1996, p. 16.
[2] Տե՛ս Քեռյան Գ., նշվ. աշխ., էջ 32:
[3] Տե՛ս Հայաստանի կոմունիստական կուսակցության Կանոնադրությունը, «Մեր խոսքը», 2 նոյեմբեր 1994:
[4] Տե՛ս Քեռյան Գ., նշվ. աշխ., էջ 32:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ32-34:
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 36:

հարցերում: Գաղափարական նման տեղաշարժը թերևս մասամբ պայմանավորված էր ՀԿԿ-ի՝ ընդդիմադիր կուսակցություն լինելու հանգամանքով: Անշուշտ, նշանակություն ունեցավ նաև ԽՄԿԿ-ից նրա անջատվելն ու ինքնուրույն գործելակերպ ընտրելը: Այդ եղանակով ՀԿԿ-ն կենտրոնացավ ազգային խնդիրների լուծման գործի վրա՝ գիտակցելով, որ դրանք չեն անհետանալու սպասողական ու անտարբեր կեցվածքի պայմաններում, և իշխանության հավակնող ցանկացած ուժ պիտի հստակեցներ իր վերաբերմունքը այդօրինակ հիմնահարցերի շուրջ, իսկ իշխանության հասնելիս կամա, թե ակամա հարկադրված առնչվեր դրանց:

1991 թ. ամռանը Հայոց համազգային շարժում կուսակցության ներսում հստակորեն դրսևորվեց փախադարձ անհամաձայնության խնդիրը: Կուսակցության երկու հիմնական թևերի միջև առաջացած հակադրությունը հանգուցալուծվեց կազմակերպության հիմնադիրների մի մասի անջատման և նոր միավորի ստեղծման ճանապարհով: Այդպես ստեղծվեց Ազգային ժողովրդավարական միությունը՝ 1991 թ. սեպտեմբերի 26-ին ՀՀ վարչապետի պաշտոնից հրաժարված Վազգեն Մանուկյանի առաջնորդությամբ: Վերջինս, ի դեպ, 1988-1990 թթ. ՀՀՇ-ի համակարգողն էր, կուսակցության վարչության առաջին նախագահը:

ՀՀՇ-ի հետ այս կուսակցության մոտեցումների ընդհանրությունը հաճախ է ստիպել հակադիր աշխարհայացք ու գաղափարաբանություն դավանող կուսակցություններին ԱԺՄ-ի մեջ տեսնել իշխող կուսակցության «արատների շարունակությունը»[1]: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ ԱԺՄ-ն հեռացավ ՀՀՇ-ից թե՛ մարտավարական, թե՛ սկզբունքային տարաձայնությունների պատճառաբանությամբ: Դավանելով քաղաքական ներկապնակի աջ գաղափարաբանության դրույթները՝ ԱԺՄ-ն, ի հեճուկս ՀՀՇ-ի, ավելի ծայրահեղական էր, իսկ երբեմն՝ նույնիսկ ծախական: ԱԺՄ-ն կողմ էր արտահայտվում պետակառավարման մարմինների միջև հակակշիռների վրա հիմնված պետական համակարգի կերտմանը՝ հիմքում դնելով խորհրդարանական կառավարման ներդրման անհրաժեշտությունն ու երաշխավորումը Սահմանադրության միջոցով: Իսկ ահա արտաքին քաղաքականության առաջնահերթությունների շարքում ԱԺՄ-ն պահանջում էր ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը[2]:

ԱԺՄ-ի ծրագրերում առանձնահատուկ դիրք էին գրավում Հայաստան-Սփյուռք հարաբերությունները: Ավելին՝ կուսակցությունը միանշանակորեն հավանության էր արժանացնում երկքաղաքացիության ինստիտուտի ներմուծումը: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը դիտելով որպես իրավունքի հարց՝ դրա լուծման գործում հայկական պետության մասնակցության չափը կուսակցությունը պայմանավորում էր «ազգային և պետական իրատեսության շահերով»[3]: Այդ դաշտում էր դիտարկվում Սփյուռքում գործող կազմակերպությունների ու քաղաքական կուսակցությունների հետ համագործակցության սերտացման անհրաժեշտությունը: Ի դեպ, այդպիսի փորձ ԱԺՄ-ն ունեցավ 1991-1997 թթ.՝ դաշնակցելով ՀՅԴ-ի հետ՝ ընդդեմ ՀՀՇ-ի: Երբեմն նույնիսկ ԱԺՄ-ն առաջարկում էր վերականգնել պետության որոշիչ դերակատարությունը կրթության, գիտության, մշակույթի, սպորտի բնագավառներում[4]:

Հանրապետությունում քաղաքական ակտիվ գործունեություն ծավալող կուսակցություններից էր Ազգային ինքնորոշում միավորումը, որը հիմնադրվեց 1987 թ. սեպտեմբերի 27-ին: Այս քաղաքական ուժի առաջնորդ Պարույր Հայրիկյանը կուսակցությունը համարում էր 1966 թ. ստեղծված Ազգային միացյալ կուսակցության գործի շարունակողը[5]: Քաղաքական սույն կազմակերպությունը հավանաբար հայաստանյան նույնատիպ միավորումներից ամենաբարդ կառուցվածքն ուներ[6]: Նրա ղեկավար

---

[1] «Երկիր» 30 հուլիս 1994:
[2] Տե՛ս Քեռյան Գ., նշվ. աշխ., էջ 39:
[3] Քեռյան Գ., նշվ. աշխ., էջ 38:
[4] Տե՛ս Քեռյան Գ., նշվ. աշխ., էջ 40:
[5] Մանրամասն տե՛ս Հայրիկյան Պ., Ազգային Միացյալ Կուսակցություն. Ծրագիր, կանոնադրություն և պարագայք, Ե., 1991:
[6] Մանրամասն տե՛ս «ԱԻՄ. ծրագիր, կանոնադրություն և պարագայք», Ե., 1992:

մարմիններն էին համագումարը, նախագահությունն ու վերստուգիչ հանձնաժողովը: Ինչպես կուսակցության անվանումն է հուշում՝ նրա գաղափարաբանական հիմքում մարդն է ու վերջինիս ինքնորոշման իրավունքը: ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին ԱԻՄ-ն իր գործունեության առանցքը համարում էր ՀՀ անկախությունը, իսկ դրանից հետո կուսակցությունը գերակա նպատակ հռչակեց ժողովրդավարության կայացումը: Թերևս կարելի է ինչ-որ չափով համաձայնել այն կարծիքին, որ ԱԻՄ-ին ավելի բնորոշ էր ինտերնացիոնալ կազմակերպության տեսակը՝ բնույթով առավելապես նման «ռուսական սոցիալ-դեմոկրատական շարժմանը, որ ծնվել էր բանտերում և կրում էր խորհրդային այլախոհության դրոշմը»[1]:

ԱԻՄ-ն իր արտաքին քաղաքականության առաջնահերթությունների շարքում հատկանշում էր ՀՀ-ի եվրաինտեգրումը: Հայ-ռուսական հարաբերությունների հարցում էլ կուսակցությունը դրականորեն էր տրամադրված՝ առավել կարևորելով Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի հետ հարաբերությունների սերտացումը: Կուսակցությունն Արևմուտքին էր վերապահում «ՀՀ անկախության և տարածաշրջանային կայունության» երաշխավորի դերը[2]: ԱԻՄ-ը հանդես էր գալիս Հայկական հարցի ամբողջական լուծման օգտին՝ ընդունելով, որ «դիվանագիտական նկատառումներից ելնելով» Արցախի վերջնական միավորումը ՀՀ-ին կարող էր առժամանակ փոխարինվել Արցախի ինքնորոշման կարգավիճակով [3] : Հայ-թուրքական հարաբերությունների էությունը ԱԻՄ-ի առաջ հառնում էր իբրև «դիվանագիտական պատերազմ», որի ժամանակ Հայաստանը պարտավոր էր համարժեք քայլեր ձեռնարկել, ինչպես օրինակ՝ պահանջել Ցեղասպանության ճանաչումը, 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի՝ ՀՀ-ին վերաբերող մասի չեղարկումը, Կարսի նահանգի վերադարձը Հայաստանի Հանրապետությանը և այլն: Ինչ վերաբերում է Արցախյան հակամարտությանը, ապա ԱԻՄ-ը, որպես միակ ընդունելի լուծում, տեսնում էր ինքնորոշման իրավունքի կիրարկումը՝ բանակցային որևէ էտապում այն սակարկության առարկա չհամարելով: Կուսակցության ծրագրերում կարևոր դիրք էր գրավում Հայրենիք-Սփյուռք ջանքերի մեկտեղման հրամայականը, ինչի երաշխիքը երկքաղաքացիության ինստիտուտն էր[4]:

Հայաստանում իրենց քաղաքական գործունեությունը վերսկսեցին նաև հայկական սփյուռքի ազգային կուսակցությունները՝ Հայ յեղափոխական դաշնակցությունը, Սոցիալ դեմոկրատ հնչակյան ու Ռամկավար ազատական կուսակցությունները: 70 տարի հարկադիր հեռացումից հետո այս քաղաքական կազմակերպությունները Արցախյան շարժման վերջնափուլում վերադարձան Հայաստան՝ մասնակցելու երկրի հասարակական-քաղաքական կյանքին:

Հայ ավանդական կուսակցություններից թերևս ամենամեծ ազդեցությանն ու ռեսուրսներին տիրապետում էր ՀՅԴ: Սփյուռքահայության տարբեր գաղթօջախներում ՀՅԴ-ն առանձնացել է իր դերակատարությամբ ու կազմակերպվածությամբ: Իրավամբ, ՀՅԴ-ն 19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբի հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարների ու նպատակների առավել ամբողջական կրողն էր, որին բախտ էր վիճակվել նույնիսկ դառնալ Հայաստանի Առաջին Հանրապետության՝ բազմադարյան դադարից հետո նոր պետականության կերտող ուժը: ՀՅԴ-ն, հիմնադրված լինելով դեռևս 1890թ. Թիֆլիսում, հայ քաղաքական կուսակցություններից ամենաերկարակյացներից էր: Հայաստանի Հանրապետությունում այն պաշտոնապես գրանցվել էր 1991 թ. հուլիսի 2-ին: Մինչև 1994 թ. ժամանակավոր կասեցումը՝ կուսակցության ղեկավարությունը Հայաստանում իրականացնում էին ՀՅԴ Բյուրոն և Հայաստանի Կենտրոնական կոմիտեն: 1998 թ. վերականգնումից ի վեր՝ Հայաստանում նրա քաղաքական գործունեությունը համակարգող և ղեկավարող բարձրագույն օղակը Գերագույն մարմինն էր՝ որպես օրինականորեն կուսակցության գծի համար պատասխանատու ատյան: 1990-ական թթ սկզբին ՀՅԴ-ն գործում էր գաղափարական

---

[1] «Հայաստանի Հանրապետություն», 4 ապրիլի 1991:
[2] Տե՛ս «ԱԻՄ նախընտրական ծրագրահենքը», Ե., 1995, էջ 4:
[3] Տե՛ս Քեռյան Գ., նշվ. աշխ., էջ 42:
[4] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կուսակցություններ», էջ 35:

կենտրոնացվածության և կառուցվածքային ապակենտրոնացման սկզբունքի հիման վրա՝ ստորին օղակների աշխատանքը թողնելով բավականին ազատ՝ անշուշտ, ՀՅԴ Ընդհանուր ժողովների թելադրած բանաձևերի շրջանակներում:

ՀՅԴ-ն Հայաստանում իր գործունեությունը վերսկսելու մասին ազդարարեց 1990 թ. օգոստոսի 8-ին, երբ իշխանությունն արդեն անցավ ժողովրդավարական ուժերին: «Դեպի երկիր» կարգախոսով ՀՅԴ-ն ավետում էր իր՝ հայրենիք վերադարձն ու ազգային-պետական շինարարությանը մասնակից դառնալը[1]: Հատկանշական է, որ ՀՅԴ-ի ու ՀՀՇ-ի հարաբերություններն ամենադրամատիկն էին այս պատմափուլի ընթացքում: Կուսակցության գործունեությունը նույնիսկ մոտ 3 տարի կասեցվեց Հայաստանում: 1998 թ. ՀՀ-ում վերականգնելով գործունեությունը՝ ՀՅԴ-ն իր կառուցվածքն ու կանոնադրությունը համապատասխանեցրեց ՀՀ օրենսդրությանը, և նրա գործունեության օրինականությունը Հայաստանում այլևս կասկածի տակ չդրվեց[2]: 1998թ. ՀՅԴ 27-րդ Ընդհանուր (Արտակարգ) ժողովի կողմից հաստատվեց ՀՅԴ-ի հայաստանյան գործունեության ծրագիրը: ՀՅԴ-ն հանդես էր գալիս որպես ազգային, ընկերվարական, ժողովրդավարական և հեղափոխական կուսակցություն: Ձգտելով Հայ դատի լուծմանը՝ Դաշնակցությունը առաջադրում էր անհատի ազատության, ազգային ինքնորոշման, անկախ պետականության, համերաշխության և բարօրության գաղափարները որպես միջոց՝ ապահովելու հայ ազգի անկաշկանդ զարգացումը[3]:

ՀՅԴ-ն իր ծրագրային հիմքում որպես նպատակներ էր հռչակում «ազատ, անկախ և միացյալ Հայաստանի» կերտումը, ժողովրդավարական ու ընկերվարական հասարակության ստեղծումը, պատմական Հայաստանի հողերի միավորումը, հայության համախմբումը մայր հայրենիքում, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու փոխհատուցումը: [4] Կուսակցության համար արտաքին քաղաքականության բնագավառում կարևորագույն հիմնախնդիրը հենց Ցեղասպանության միջազգային դատապարտումն էր, բռնագրավված հողերի վերադարձն ու արդար փոխհատուցումը: Որպես Հայ դատի լուծման առաջին հանգրվան էր դիտարկվում նաև Արցախի հարցի վերջնական ու հաղթական լուծումը: ՀՅԴ-ն ընդգծում էր համագործակցության անհրաժեշտությունը միաժամանակ թե՛ ՌԴ-ի, թե՛ ԱՄՆ-ի և թե՛ ԵՄ-ի հետ: Արժե հիշատակել, որ 1991 թ. մարտին քաղաքական գործունեություն ծավալելու հայտ ներկայացրեց նաև Հայաստանի հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը, որն իրականում առնչություն չունենալով ՀՅԴ-ի հետ, կարճ ժամանակ անց դադարեցրեց իր գործունեությունը[5]:

ՀՀԿ-ն Հայաստանում պաշտոնապես գրանցված առաջին հասարակաքաղաքական կազմակերպությունն էր՝ 1991 թ. մայիսի 14-ին[6]: Այն իրեն համարում էր ԱՄԿ-ի ժառանգորդը՝ պայմանավորված ԽՍՀՄ վերջին տասնամյակում այլախոհական շարժմանը կուսակցության հիմնադիր Աշոտ Նավասարդյանի մասնակցության գործոնով: Կուսակցության գաղափարաբանական ուսմունքը դարձավ նժդեհականությունը՝ տարոնականության ու ցեղակրոնության սկզբունքներով[7]: Կուսակցության բարձրագույն մարմինը համագումարն էր, իսկ միջանկյալ գործադիր աշխատանքները վարում էր խորհուրդը: Ի տարբերություն 2000-ական թթ.՝ 1990-ական թթ. ՀՀԿ-ն համեմատաբար փոքր կուսակցություն էր, որի խորհուրդը բաղկացած էր լոկ 9 հոգուց[8]:

ՀՀ քաղաքական կյանքում վերոնշյալ քաղաքական ուժերից զատ գոյություն ունեին նաև բազմաթիվ այլ կուսակցություններ, որոնք քաղաքական տարբեր իրավիճակներում հարում էին հենց այս կուսակցություններին՝ նրանց հետ դաշինք

---

[1] Մանրամասն տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 207, g. 64, գ. 240:
[2] Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Վերադարձ, Ե., էջ 202-203:
[3] Տե՛ս «Ծրագիր Հայ Յեղափոխական Դաշնակցության», Հաստատված ՀՅԴ ԻԷ Ընդհանուր (Արտակարգ) ժողովի կողմից, Ե., 1998:
[4] Մանրամասն տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 207, g. 64, գ. 240:
[5] Տե՛ս Աբրահամյան Հ., Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Ե., 2009, էջ 63-64:
[6] Տե՛ս ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1688, g. 1, գ. 1, թ. 5:
[7] Տե՛ս նույն տեղում, գ. 177, թ. 22:
[8] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1183, g. 1, գ. 56:

կազմելով: Այդպիսի կուսակցություններից հարկ է հակիրճ անդրադառնալ Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միությանը, Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությանը, Ռամկավար ազատական լիբերալ կուսակցությանը, Հայաստանի դեմոկրատական կուսակցությանը, Սահմանադրական իրավունք միությանը, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությանը, ՀՀ «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքով գրանցված Մտավորական Հայաստան (ՄՀ) և Գիտնականների ու արդյունաբերողների քաղաքացիական միություններին (ԳիԱրՔՄի):

Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միություն կուսակցությունը 1990-ականներին ակտիվ քաղաքական դերակատարություն ուներ: Մե՛րթ ընդդիմադիր, մե՛րթ իշխանական կուսակցության կարգավիճակը ընտրած ՀՔԴՄ-ի բարձրագույն մարմինը համագումարն էր, իսկ ամենօրյա աշխատանքների համակարգիչ մարմինը՝ նախագահական խորհուրդը[1]: ՀՔԴՄ-ն ընդգծում էր քրիստոնեական ըմբռնումի հիման վրա ժողովրդավարական հասարակարգ կառուցելու հանգամանքը՝ դեմ արտահայտվելով ցանկացած տեսակի բռնությանն ու սատարելով ազգերի ինքնորոշման գաղափարը[2]: ՀՔԴՄ-ն իր համար նպատակ էր հռչակել հանրապետությունում բարոյա-քաղաքական միասնության ապահովումը, անկախ պետականության վերականգնումը, ազգային-քաղաքական մեկուսացման հաղթահարումը: Կուսակցությունը առանձնահատուկ ընդգծում էր տնտեսության հզորացման և մարդու իրավունքների ու ազատությունների վերականգնման նշանակությունը[3]: ՀՀ անվտանգության ու ապահովության երաշխավորումը հնարավոր համարելով եվրահնտեգրման ճանապարհով՝ ՀՔԴՄ-ն դեմ չէր ՀԱՊԿ-ում ու ԱՊՀ-ում ՀՀ անդամությանը: Հայ դատի հարցում կուսակցությունը մոտեցում էր որդեգրել՝ այն մատուցելով իբրև եվրոպական համայնքին ինտեգրվելու ճանապարհ, որով կապահովվեր երկրի ժողովրդավարացումը, ազգի հոգևոր անընդհատության երաշխավորումն ու դինամիկ զարգացումը: ԼՂ հարցում կուսակցությունը կողմ էր ցանկացած տարբերակի, որով կերաշխավորվեր Արցախի ազատ ու անվտանգ զարգացումը:[4]

Քաղաքական ներկապնակի աջ սանդղակում տեղավորված կուսակցություններից էր նաև Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությունը, որն իր առաքելությունն էր հայտարարում Հայաստանում հաստատել ու ամրապնդել ժողովրդավարության և ազատականության սկզբունքները: Կուսակցությունը անսակարկելի էր համարում ՀՀ անկախությունն ու տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև մեծ նշանակություն տալիս Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու Թուրքիայի կողմից արդար փոխհատուցմանը[5]: ՀՌԱԿ-ի բարձրագույն մարմինների դերում հանդես էին գալիս ամեն տարի հրավիրվող համագումարները, որոնց միջանկյալ հատվածում կուսակցությունը ղեկավարում էր հանրապետական վարչությունը[6]:

1994 թ. օգոստոսի 20-ին ստեղծվեց ՌԱԼԴԿ-ն, որի անդամները, լքելով ՀՌԱԿ-ը, հիմնադրեցին սեփական քաղաքական կազմակերպությունը: Կուսակցությունն իր համար նպատակ էր հռչակում հայ հասարակության քաղաքականացումը: Միաժամանակ ՌԱԼԴԿ-ն ազատականությունը հայտարարում էր իր քաղաքական դավանանքը[7]: Կուսակցության ղեկավար մարմինը համագումարներն էին, իսկ դրանց միջակայքում գործադիր կառավարումն իրացնելու էր քաղխորհուրդը: ՌԱԼԴԿ-ն ուներ տեղական կազմակերպություններ, ինչպես նաև երիտասարդների, կանանց միություններ[8]:

Ձախ ուղղվածություն ունեցող կուսակցություններից էր Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը, որը ստեղծվեց Կոմկուսի տրոհման արդյունքում՝ 1991թ.

---

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 58:
[2] Տե՛ս նույն տեղում, g. 3, գ. 99:
[3] Տե՛ս նույն տեղում, g. 1, գ. 58:
[4] Նույն տեղում:
[5] Տե՛ս նույն տեղում, գ. 53:
[6] Նույն տեղում:
[7] Տե՛ս նույն տեղում, g. 3, գ. 99:
[8] Նույն տեղում:

սեպտեմբերի 18-ին: Կանոնադրությամբ՝ կուսակցության ղեկավար բարձրագույն մարմինների դերում հանդես էին գալիս համագումարները, ինչպես նաև Հանրապետական խորհուրդն ու նախագահությունը՝ որպես մշտական գործող մարմին (նախագահ և 4 տեղակալներ): ՀՀ արտաքին քաղաքականության բնագավառում ՀԴԿ-ի համար տիրակայող նշանակությունը պատկանում էր հայ-ռուսական հարաբերություններին, որոնք կուսակցությունը ներկայացնում էր իբրև ռազմավարական գործընկերություն: ՀԴԿ-ն շեշտում էր Հայ դատի պաշտպանությամբ հանդես գալու ՀՀ պետական պարտավորությունը՝ դրա բաղկացուցիչ մասը դիտարկելով նաև Արցախի հիմնահարցի արդարացի լուծումը: Հարևաններից Թուրքիայի հետ հարաբերություններում ՀԴԿ-ն պաշտպանում էր անշեղ պահանջատիրության գաղափարը: Վերջինիս համապատկերում ՀԴԿ-ն մասնավորեցնում էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դրա հետևանքների փոխհատուցման և տարագրված հայությանը հայրենիք վերադարձնելու շղթան: ՀԴԿ-ն կարևորում էր նաև Արցախի միավորումը Մայր Հայաստանի հետ:

Արցախյան զարթոնքի շրջանում կազմավորվեց նաև «Սահմանադրական իրավունք միությունը», որը բազմակուսակցական համակարգի հաստատումից առաջ ստեղծված առաջին կազմակերպություններից էր: Այն հիմնադրվեց 1989 թ., իսկ ՀՀ Արդարադատության նախարարությունում պաշտոնապես գրանցվեց միայն 1991 թ. օգոստոսի 19-ին[1]: Կուսակցության ղեկավար բարձրագույն մարմինը համաժողովն էր, որին զուգահեռ գործում էին ներկայացուցիչների ու գործադիր խորհուրդները և նախագահությունը: Կուսակցությունը որպես առանցքային նպատակ հռչակում էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, Հայ դատի խնդիրների լուծմանը հասնելը: Դեմ լինելով տարածքային «էական» զիջումներին Արցախի հարցում՝ կուսակցությունը ՀՀ-ի ու Արցախի վերամիավորման կողմնակիցն էր: ՍԻՄ-ը նաև պահանջում էր Հայաստանի սահմանադրության մեջ ամրագրել արցախահայության իրավունքները[2]: Ի դեպ, կուսակցությունը ՀՀ ռազմավարական գործընկերությունը պատկերացնում էր միայն Ռուսաստանի հետ, իսկ ահա հայ-թուրքական հարաբերությունների առնչությամբ բարձրացնում էր ցեղասպանության ճանաչման ու դատապարտման անհրաժեշտությունը:

Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը Հայաստանում իր գործունեությունը վերսկսած սփյուռքյան կուսակցություններից երրորդն էր: Նրա բարձրագույն ղեկավար մարմինը համագումարն էր, որին զուգահեռ գործում էին կենտրոնական վարչությունն ու վերջինի ղեկավար ատենապետը: ՍԴՀԿ-ն Հայ դատը գնահատում էր իբրև ՀՀ արտաքին քաղաքականության բաղկացուցիչ մասերից մեկը: Կուսակցությունը շեշտադրում էր համայն հայության շահերի պաշտպանությունն ու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման անհրաժեշտությունը: ԱՄՆ-ի հետ կուսակցությունն առաջարկում էր վարել զգուշավոր քաղաքականություն՝ կախվածությունն այդ երկրից հասցնելով նվազագույնի: Իսկ ահա Ռուսաստանի հետ գործակցությունը ՍԴՀԿ-ն կենսական էր համարում՝ ելնելով ավանդական դաշնակցային հարաբերություններից: Չմերժելով Թուրքիայի հետ պաշտոնական հարաբերություններ հաստատելու տարբերակը՝ ՍԴՀԿ-ն ընդգծում էր դրանց աննախապայման բնույթը, մինչդեռ Ադրբեջանի հետ հակասությունների լուծման հարցում կուսակցությունը փոխզիջումային մոտեցման դավանողն էր՝ պայմանով, որ Արցախի տարածքային ամբողջականությունը չվնասվեր:

Աջ ուժերի դաշինքում էր նաև «Մտավորական Հայաստան» միությունը, որը 1995թ. «Հանրապետություն» միավորման կազմում հայտնվեց ՀՀ առաջին գումարման Ազգային ժողովում: Այն ստեղծվել էր 1994 թ. մայիսի 27-ին՝ գործունեության հիմնական նպատակ հռչակելով հայ ժողովրդի դարավոր իղձերի իրագործումը: Խնդիր էր հռչակվում աշխարհի ողջ հայությանը Հայաստանում համախմբելը[3]: ՄՀ-ի ղեկավար բարձրագույն մարմինը համարվում էր 3 տարին մեկ անգամ հրավիրվող

[1] Տե՛ս Աբրահամյան Հ., Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Ե., 2009, Հավելված 1:
[2] Մանրամասն տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 207, ց. 64, գ. 199
[3] Մանրամասն տե՛ս ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1183, ց. 3, գ. 99:

համագումարը, որից զատ որպես միջանկյալ գործող մարմին էր կազմակերպության վարչությունը: Ի դեպ, ՄՀ-ն արտաքին քաղաքականության մեջ շեշտում էր Ռուսաստանի հետ հարաբերությունների խորացումը:

Այս շրջանի ակտիվ հասարակական-քաղաքական կազմակերպություններից էր նաև ԳիԱրՔՄի-ն, որ ստեղծվել էր 1994 թ. օգոստոսին: Այն իր առջև դրել էր հասարակության մեջ տիրապետող արժեքային համակարգի փոփոխության խնդիրը: ԳիԱրՔՄի-ն իր նպատակն էր հռչակում մտավորականության համախմբումը, ինչպես նաև գաղափարաբանական հիմքերի մշակմամբ քաղաքական խնդիրների առաջադրումը[1]: Միությունն իր առաջ խնդիր էր դնում «փրկել երկիրը աղետից» կատարելով արժեհամակարգային փոփոխություններ[2]: ԼՂ-ի հարցում այն ինքնորոշման իրավունքը համարում էր անսակարկելի, իսկ Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ գլխավոր ուղղությունը հայտարարում հայ-ռուսական ռազմավարական միություն-գործակցությունը[3]: ԳիԱրՔՄի-ի համար ԼՂՀ ինքնիշխանությունն անվերապահ էր: Հավելենք, որ կազմակերպության բարձրագույն մարմինը համագումարն էր, որ հրավիրվում էր 2 տարին մեկ անգամ, իսկ միջանկյալ հատվածում որոշումներ կայացնելու էր վարչությունը[4]:

Հիշարժան է, որ 1997թ. հուլիսի 13-ին կայացած ՀՀՇ-ի 9-րդ համագումարում ելույթ ունենալիս Հանրապետության նախագահ, ՀՀՇ-ի առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանը հայաստանյան քաղաքական համակարգը տեղավորում էր դրա դասական կերպի մեջ՝ ակնկալելով, որ 1999թ. խորհրդարանական ընտրություններից առաջ պետք է ամբողջացած լիներ քաղաքական ուժերի քառաթև դասավորությունը. 1) աջ-կենտրոն՝ լիբերալ-դեմոկրատներ կամ քրիստոնյա-դեմոկրատներ; 2) ձախ-կենտրոն՝ սոցիալիստներ կամ սոցիալ-դեմոկրատներ; 3) աջ-ծայրահեղականներ՝ լիբերալ ազատականներ; 4) ձախ-ծայրահեղականներ՝ կոմունիստներ կամ ազգայնական սոցիալիստներ[5]: Նրա կարծիքով՝ ՀՀՇ-ն ու նրա դաշնակիցները (ՀՀԿ, ՌԱԼԴԿ, ՀՔԴՄ և այլն) կազմում էին աջ-կենտրոնը, իսկ ՀԿԿ-ն ու ՀՅԴ-ն՝ ձախ-ծայրահեղականությունը: Աջ-ծայրահեղականությունն էլ ներկայացնում էին ԱԺՄ-ն ու նրա գաղափարակից ուժերը[6]: Այս տեսակետը որքան էլ փաստարկված էր, գործնական քաղաքականության առումով նրան վիճակված չէր իրականություն դառնալ:

Ամփոփելով՝ արձանագրելի է, որ 1999թ. խորհրդարանական ընտրություններում ցայտուն դրսևորվեց ոչ միայն հայաստանյան կուսակցությունների բազմազանությունն այլև կոնյուկտուրայնությունն ու հարմարվողականությունը: Ինչ վերաբերում է գաղափարաբանական սահմանազատումներին, ապա եթե 1990-ականներին բաժանումը գրեթե հստակ էր՝ իշխանությունը ձևավորել էին աջ թեքման կուսակցությունները, իսկ ընդդիմությունը՝ ձախերը, ապա 1999 թ. խորհրդարանական ընտրություններում պատկերը լիովին աղճատվեց: Հաղթանակ տարան, պայմանականորեն, կենտրոնական և ձախ ուժերը՝ խորհրդարանից դուրս մղելով աջ՝ լիբերալ թևին, որը կրկին նկատելիորեն խախտեց հավասարակռությունը քաղաքական թատերաբեմում[7]: Եթե 1995 թ. աջ թևը լիովին թուլացրեց ձախերին, ապա այժմ պատկերը կրկնվում էր հակառակ տեսնակյունից: Ի հեճուկս 1990-ական թթ. կուսակցությունների խոշորացման ակնկալիքի՝ անկախության առաջին տասնամյակն ամփոփվեց դրանց մանրացմամբ ու պառակտմամբ: Ըստ էության, կուսակցությունների համար ավելի շահեկան էր միավորումը ոչ թե գաղափարական սկզբունքների հիման վրա, այլ իրավիճակային նպատակահարմարությամբ: Դժբախտաբար, հայաստանյան քաղաքական կազմակերպություններն ու դրանց ղեկավարներն անկարող գտնվեցին վեր կանգնել անձնա-

[1] Մանրամասն տե՛ս ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1183, g. 1, գ. 24:
[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1679, g. 2, գ. 2, թթ. 38-39:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1183, g. 1, գ. 24:
[5] Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 571:
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 572:
[7] Տե՛ս Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Ե., 2013, էջ 288:

կան հավակնություններից՝ տուրք տալով ապագաղափարականացման բացասական միտումների խորացմանը:

**Нждэ Овсепян, Идеологические принципы политических организаций Армении в первом десятилетии независимости в 1991-2001 гг.,-**В Армении несколько влиятельных политических партий были сформированы и активно участвовали в политических дебатах раньше, чем установилась многопартийная система. Эти партии имели свою идеологию и принципы. После того, как была провозглашена независимость, политический спектр наполнился новыми политическими партиями. Политические партии Армении имели существенную полемику на основе своих склонностей к либерализму, консерватизму и социализму. В начале 1990-х годов деление политических партий происходило между правыми и левыми идеологиями. В этот период были сделаны первые попытки объединения для борьбы за власть и обеспечения альтернативы для избирателя на основе солидарности вокруг идей. К сожалению, создание классического политической арены стало невозможным, что привело к раздроблению и конъюнктивным объединениям политических партий.

***Ключевые слова:***многопартийная система, распад СССР, демократия, третья армянская республика, постсоветская трансформация, политические партии

**Njde Ovsepyan, The ideological principles in the activity of social-political organizations of Armenia in 1991-2001,-**Several influential political parties were formed and actively engaged in political debate with each other in Armenia earlier than multi-party system was established. These parties had their unique ideology and principles. After independence had been achieved, the political spectrum was filled with new political parties. They started serious ideological debate with each other which was demonstrated by political disagreements as well as by principal and ideological differences. Armenian political parties had substantial polemics over domestic issues, and argued based on their predilection towards liberalism, conservatism and socialism. It is worthmentioning that each of these parties saw the exceptional road to ensure the security and social prosperity through realization of their ideological perceptions. Admittedly, in early 1990s the separation line of discords between parties was parallel to right-left division. In this period initial attempts were made to unite for power struggle and provide an alternative to the voter through solidarity around ideas as well. Unfortunately, the creation of classical political spectrum became impossible, which led to detach and illogical/conjunctive unions of political parties. None the less, further developments didn't devalue the ideological, pure political and principle complex essence of relationship between political parties in the first decade of Armenian independence.

***Key words:***Multi-party system, USSR collapse, democracy, the third Republic of Armenia, post-Soviet transition, political spectrum